

930

205
P-74

1889

2010

205
四-74

四-74

ԷՐԵՒ-ՀԱՅԿԱՆԻ

ԳՈ ԱՄԵՆԱԼԱԻ ԲԱՐԵԿԱՄԸ

—13300—

معارف عموميہ نظارت جلیلسنک ۲۰ جاذی الاول ۳۰۶ و
کانون ناف ۳۰۴ تاریخی و ۱۱۲ انور ول رخصتمانہ سیلہ
تشریفات

مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسوید اولدرق طبع اولنشدر

200

408-Ph

ԿՈՍՏԱԴԻՎՈՒՊՈՒՅ

ՏԵՐԱՎԻՐԱԿԱՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅԱԽԵԱՆ

1889

36753 ա. ի

200
408-47 120
205 R-74 ՔՊ ԱՄԵՆԱԿԱԿԱՆ² ԲՈՒԺԱՍԸՆԸ

48.

Ա. ԱՅԱՍԻԿԱՅԻ ԱՎԱՐԱՐԻ

311

Ուրախանում են երկրաւոր բարեկամների
քեզ արած բարերարութեամբ : Միսիթարւում
ես նեղութեան ժամանակ, որովհետեւ գիտես
թէ քո ցաւերի լուրը շուտով նորանց կը կան-
չէ քեզ օդնելու : Քո ամենալաւ բարեկա-
մը Յիսուս այս բանն անելու յօժարակամ
պատրաստ է : Երբոր մարդկային յանցանքների
և ցաւերի ընդարձակ տեսարանը նորա առաջ
ձգուած էր, անհուն ֆրկիչն ասաց . “Ահա
դալիս եմ” (Այսինքն օդնելու :) իւր մարդ-
կային բնութեամբ ծանօթացաւ նա մարդոց
բոլոր վշտերին : Ի՞նչ բան կայ, որ վշտացնում
տառապեցնում և տագնապում է մարդու
անձը, որ նորան չը պատահեցաւ : Ո՞ւմ հոգին
աւելի սաստիկ վիրաւորուած էր չարախոսու-
թիւնների և զրպարտութիւնների պատճառով,
որչափ որ նորանը : Ո՞րչափ մաքուր միտք կա-
րող էր համբերել մեղաց գարշելի տեսարա-
նին, որ նա չը համբերեց : Ո՞րքան փորձուե-
ցաւ նորա համբերութիւնն ու սէլը, երբոր
այս մեղանչական, հակառակող և ատելի աշ-
խարհքի մէջն էր : իւր արտասուքները թրջե-
ցին գեթսեմանիի հողը և իւր արիւնը Գողգո-
թայի դետինը : Սակայն մեղքի համար զոհ

2001

205 12-60

եղած անձի տագնապները այնքան մեծ էին ,
որ մեր մտաց հասկացողութիւնից բարձր են :
իւր մարմինի բոլոր անձկութիւնը և իւր հոգու
բոլոր տագնապը ցոյց են տալիս իւր սիրոյ ան-
կեղծութեան չափը :

Նաև դու ուրախանում ես աշխարհային բարե-
կամների կարողութեան մասին , վատահելով նո-
ցա քեզ օգնելու կարողութեանը , ինչպէս նաև
նորանց քեզ համակելու պատրաստականու-
թեան մասին : Քո ամենալաւ բարեկամը այս տեղ
էլ պակաս չէ : Ստեղծող զօրութիւնը մի ան-
սահման կարողութիւն չէ : Այս բանը դանում
է Յիսուսում : “ Քանզի նորանով ամեն բան
ստեղծուեցաւ , ինչ որ երկնքումն և ինչ որ
երկրիս վերայ է , երևելիներն և աներևոյթ-
ները , թէ՛ աթոռները , թէ՛ տէրութիւնները ,
թէ՛ պետութիւնները , թէ՛ իշխանութիւնները ,
ամեն բաները նորանով և նորա համար ստեղ-
ծուեցան : ” Թէ որ մէկը տիեզերքի կառավա-
րին է , պէտք է ունենայ մի ամենակարող
բազուկ : Ուստի Քրիստոս ամենակարող է , ո-
րովհետեւ « Նա իւր զօրութեան խօսքովը ամեն
բան պահում է : ” Արդ ամբողջ բնութեան և
բովանդակ յաւիտենականութեան մէջ ի՞նչ
կայ , որ նորա տէրութեանը հպատակ չը լինի :
Ուստի քո ամենալաւ բարեկամը զօրութիւն
ունի իւր բարերարութիւնը ի գործ դնելու :
իւր սրտի քաղցր մարդասիրութեան վրայ կա-

բող է աւելացնել իւր ձեռաց ամենակարո-
ղութիւնը : Ցոյց տո'ւր մի կարօտութիւն , որին
նա չը կարողանայ օգնել , մի վտանգ , որին նա
չը կարողանայ հեռացնել : Իւր մարդկային բը-
նութիւնը և տկարութեանց փորձառութիւնը
պատճառ են դառնում նորա համակրութեա-
նը գէպի քո երկրաւոր ցաւերը : Սակայն ,
իբրև աշխարհների Արարիչ և Պահպանիչ , իւր
անհուն բարձրութեան մէջ նա յարմարում է
ցոյց տալ ամեն տեսակ բարեկամութիւն յա-
ւիտենականութեան մէջ իր բարեկամներին :

Ուստի պէտք չէ՝ նորա վերայ , ինչ-
պէս մի մնասուած և անփոխարինուած բարե-
կամի վերայ : Խանդակաթ և ջերմ բարեկա-
մութիւնը սաստիկ վիրաւորում է նաև մո-
ռացութեան պատճառաւ : Գուցէ բոլոր մեղքի
գարշութեան պատճառով չես մեղադրում ,
սակայն քեզանում ցուրտ անտարբերութիւն
չկայ գէպի այս անհուն բարեկամը : Աշխարհը
չի երևել քեզ աւելի պայծառ և գեղեցիկ ,
քան փառաց Տիրոջ բոլոր գրաւիչ յատկու-
թիւնները : Հաւանականաբար մի այսպիսի բա-
րեկամ ներս մտնելու համար առաջին անդամ
սրտիդ դուռը բազիսելիս ջերմ ընդունելու-
թիւն պիտի գտնէր , եթէ բոպէկական յետա-
ձգութեան մեղքը չը լինէր : Այնքան քաղցր ,
մաքուր , անկեղծ և անբացատրելի եղաւ նորա
սէրը , որ գէպի նորան ցոյց տրուած մի ա-

մենափոքր անտարբերութիւն խիստ մեծ նաև
խատինք է : Այս սիրով չաղդուիլը Քրիստոսի
համար մի յայտնի թշնամնք է : Բայց ո՞ր
քան մեծ եղաւ նաև այս յանցաւոր անտար-
բերութիւնը դէպի ի քո ամենալաւ բարեկամը:
Երկրաւոր բարեկամութիւնը դէպի քեզլումնի
ցուրտ ճառագայթների նման է՝ բաղդատ-
մամբ Փրկչի արեգակի ջերմ ճառագայթանը:
ման սիրոյ հետ, այսու ամենայնիւ մարդկային
բարերարութեամբ քո սիրուը կակղացել է,
մինչդեռ նա աստուածային սիրովը ոչինչ չի
աղդուել և բեեւային անհալ ձիւնի նման է
դարձել: Դու չես նուիրել քո սէրը և հնաւ
զանդութիւնը Քրիստոսին, սակայն նա հիմա
կանգնում է քո առջև քո սիրուը շարժելու
համար աւելի դիրքով, ինչպէս խոր վիրաւոր-
ուած մի բարեկամ:

Բայց նա մի համբերող բարեկամ է տա-
կաւին : Այս աստղը նորա փառաց պսակի վե-
րայ մի ուրիշ պայծառութիւն է : Մարդկային
բարեկամութիւնը շուտ է հովանում . նա չի
փոխարինում: Մարդկային բարեկամութիւնը
յաճախ և կատարելապէս ջնջում է շարու-
նակ վշտացուելու պատճառաւ: Արդ ո՞չափ
տարբերութիւն կայ մարդկային և Փրկչի բա-
րեկամութեանց մէջ: Կենցաղավարութեամբ
նորա բնութիւնը փորձուել է: Ոչ մի մարդ-
կային էակի բարերարութիւնը չի կարող դի-

մանալ այսպիսի դրդուիչ փորձութեանց բու-
թակի մէջ: Նկատի՛ր թէ դու ի՞նչ ես արել
նորան թշնամանելու համար: Թո՛ղ քո պա-
տանեկութեան տարիները յիշեցնեն քեզ թէ
քանի՛ քանի՛ կերպերով Քրիստորար սէրը ներ-
կայացուել է քո մտածողութեանը, սակայն
նա արհամարհուել է միշտ: Թո՛ղ կենաց վեր-
ջին երկար միջոցները յայտնեն քեզ թէ որքան
և ինչ աղդու կերպերով քո ամենալաւ բարե-
կամը ջանացել է քեզ սիրել տալ իրեն, բայց
միայն մշտատես զանցառութեամբ մերժուել է:
քո ամենատեսակ ուրացութիւնները գրուել են
նորա հաշուէդրքում և նոցա բոլոր դրդուիչ
բնութիւնները ներկայ են նորա առաջ: Բայց
նա մինչև հիմա վրէժինդրութիւն չի արել:
Նա տեսել, լսել և դդացել է իր բարերա-
րութեանց դէմ քո արած բոլոր թշնամանք-
ները, սակայն նա դարձեալ եղել է մի եր-
կայնամիտ բարեկամ:

Ուրեմն պէտք չէ, որ նա մի նեղացած բա-
րեկամ լինի: Նա չի կարող անզգայ լինիլ իր
դերազանց իրաւունքների մասին, ոչ էլ կոյր՝
իրան դէմ գործուած չարագործութեան դար-
շելի մեղքը տեմնելու մասին: Ո՞չ ապաքէն
երկնային զօրաց ամբողջութիւնը պատռում է
նորան ամենաքաղցր սիրով և ամենաազդու-
հնաղանդութեամբ: Երկնայնոց բոլոր պսակ-
ները չեն ձգւում նորա ոտների առաջ իրը

յարդական երկրպագութիւն։ Երբ մեղանչող հրեշտակները մերժեցին այն մեծարանաց երկրպագութիւնը, արդեօք պակաս գտնուեցաւ նա ճանաշելու իւր էական իրաւունքները և նոցա գարշելի մեղքը։ Արդեօք իւր պահանջները դէպի քեզ այնպէս զօրաւոր չե՞ն, ինչպէս դէպի հրեշտակները։ Իւր փրկարար սէրը մի ազդու կոչում չէ դէպի մեղաւորները՝ քան դէպի անմեղ հրեշտակները։ Մի՛ ասա, թէ արդեօք որովհետեւ քո անհուն բարեկամը երկայնամութեամը է վերաբերում դէպի քեզ, նեղացած չէ։ Մի՛ որոճիր մի նոր յանցանք թեժեւ համարելով նորա բնաւորութեան բարոյական փառքը։ Ես չէի ուզում, որ հնազանդութիւնն ու սէրը նորան տայիր, եթէ նա կարող է ընդունել այսպիսի մի անարժան վարմունք, ինչպէս մեղաւորները կամենում են նորան։ Սա պիտի յայտնէր մի այնպիսի անտարբերութիւն դէպի նորա փառքը և մի այնպիսի անհոգութիւն նորա օրէնքը կոտրելու մասին, որ նորա բնաւորութեան հակառակ պիտի լինէր, իբրև մի արդար և բարոյական իշխան։ Քրիստոսի անհուն բարերարութեանց և համբերութեանց նայի՛ր շարունակ, որչափ որ կուղես, սակայն նորա այս բարերարութիւնն և համբերութիւնը մի ըոպէ թո՞ղ խորհիլ չտան քեզ թէ նա վշտացած չի լինիլ իւրաքանչիւր անդամ, երբ նորա կամքը կոտրում և նորա

բարերարութիւնը արհամարհւում է։ Նա ոչ միայն ողորմած և դժառատ է, այլ և սրբութեամբ փառաւորեալ։ Ոչ միայն նա Աստուծոյ գառնուկն է, հապա նաև Յուդայի ցեղի Առիւծը։

Ուստի զգուշացի՛ր, որ քո ամենալաւ բարեկամը քեզ համար մի կորսուած բարեկամ չը լինի։ Քո ներկայ մեղաց ընթացքը հեռացնում է նորան քեզանից յաւիտեան։ Նորա համբերութիւնը զարմանալի է, բայց դու արագութեամբ մերժում ես նորան։ Եթէ խորհես թէ նորա համբերութեան վախճանի երբ լինելը չես իմանում, և, անշուշտ, չես էլ իմանում թէ որքան մօտ ես այն սահմանին, ճիշդայս ըոպէիս կը սարսափես։ Այս անհուն սիրոյ, գուցէ մի անգամ, մերժուիլ բաւական պիտի լինի այս մեծ խնդիրը լուծելու և պատճառելու, որ նորա ողորմութիւնը յաւիտեան հեռանայ քեզանից։

Մի բարեկամի կորստեան վերայ մեր ունեցած անձկութիւնը համեմատում է մեր նորա հետ ունեցած բարեկամութեան արժէքի հետ։ Ուստի, նայի՛ր Քրիստոսի բարեկամութեան արժէքի վերայ, նորա անհուն յատկութեանց լուսով և նորա պարզեած օրհնութեանց միջոցով։ Մի այսպիսի բարեկամից հեռու լինելը, այս կեանքումն էլ, մի մեծ կորուստ է։ Այս բարեկամութիւնը ի՞նչ միսիթարիչ պայծառու-

թիւն է սփոռում անյաջողութեան մուժ վայ-
րերում։ Այն սիրաը, որ արդ արութեան Արե-
գակի ճառագայթների լցուը չի վայելում, ի՞նչ
թանձրամած և տիրագին խաւարով է պատ-
ուել նա ։ Առանց նորան որքան մութն է մահ-
ուան շուքի ձորը։

Յաւիտենականութիւնը ի՞նչ մեծ պատեհու-
թիւն կը տայ ճանաչելու մի այսպիսի բարե-
կամի կորուսոր ։ Այնտեղ մտաւոր աչքի շլա-
յութիւն չի լինի։ Աշխարհային հոգսերը կամ
հաճոյքները չեն կարող արգելել այդ ահարկու-
նիւթի վերայ եղած խոր խորհուրդը։ Ի՞նչ
սարսափելի պայծառութեամբ կորուսեալ բա-
րեկամի բարերարութեանց բոլոր տպաւորու-
թիւնները պիտի վերադառնան դէպի կոր-
սուած մեղաւորի միտքը։ Նորա փրկիչ զօրու-
թիւնը, նորա խոնարհութիւնը և չարչարանք-
ները, նորա համբերութիւնը, նորա հրաւէր-
ները և խոսառումները խորհրդի ի՞նչ սարսա-
փեցուցիչ նիւթեր են, երբոր կենաց բար- ած
քարտէզի վերայ փայլում են ճշմարտու-
ճառագայթների սաստիկ պայծառութիւնները
յաւիտենականութեան մէջ։ Զգուշացի՛ր որ
չը հանդիպես յաւիտենականութեան մէջ այն
ահարկութեանը որ քո ամենալաւ բա-
րեկամի պահանջանաչ բարեկամ լինի քեզ
համար ։

7 / XI 1922
* C.C.P.R. Ա. Սահմանական Հանձնաժողով

604

930

0024630

930

«Ազգային գրադարան



NL0027630

